ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հոկտեմբերի 3-ին, կիրակը օրը, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում տեղի ունեցավ սարկավագական ձեռնադրություն՝ ձեռամբ Վիրահայոց թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի:

Այդ օրը սովորականից ավելի մարդաշատ էր եկեղեցին: Հավատացյալները եկել էին սրբազան հոր և նորընծաների խարտավիլակ արժանապատիվ Տ. Հովսեփ ավագ քահանա Հակոբյանի հետ աղոթելու նորընծա սարկավագների համար, որպեսզի Աստված նրանց բազում շնորհներով օժտի, որպեսզի ամեն ինչում պարզերես կանգնեն թե՛ Աստծո և թե՛ ժողովրդի առաջ:

Սրբազան հայրը ձեռնադրության ավարտին հավուր պատշաճի քարոզ խոսեց, որում բարեմաղթություններ արեց նորընծաներ Գրիգոր սարկավագ Աշուրյանին, Զանիկ սարկավագ Պողոսյանին և Գևորգ սարկավագ Ղուշչյանին, որպեսզի նրանք հաստատուն մնան իրենց հոգևոր ճանապարհին, որպեսզի չարը երբեք չսասանի նրանց մտքերն ու հոգիները: Ձեռնադրիչ սրբազան հայրը շեշտեց և բացատրեց սարկավագության կարևորությունը թե՛ ժողովրդի և թե՛ եկեղեցու կյանքում:

«Տէր ողորմեա»-ի հոգեզմայլ երգեցողությամբ և անուշաբույր խնկի ծխով պարուրված, նրանք հաղորդվեցին մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի մարմնով և արյամբ:

Խնկաբույր խորանը խորին խորհուրդ էր ամբողջությամբ:

Ս. պատարագի ավարտին հավատացյալ ժողովուրդը, հոգևոր դասի ներկայացուցիչներն ու հոգևոր ճեմարանի ուսանողները համբուրեցին սըր-

բազան հոր աջը և շնորհավորեցին նորընծաներին՝ մաղթելով նրանց հաստատ մնալ իրենց ուխտին:

Կեսօրից հետո, ժամը 3-ին, ձեռնադրող սրբազան հոր առաջնորդությամբ, նորընծա սարկավագները Վեհարանի ընդունարանում ստացան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր օրհնությունը:

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԺԱՄԿՈՉՅԱՆ